

նեցին: Թոյլ և փոփոխամիտ Վիգիլիուսը՝ որ բազմեւ էր Պետրոսի գահի վրայ, ամենաողորմակի կերպով կայսեր մասնեց, որը իրապէս կառավարում էր եկեղեցին, Հռովմի եկեղեցու գիրքն ու աստիճանը: Տիեզերական հինգերորդ ժողովը փակուեց միանգամայն հլու հպատակուելով կայսեր հրամաններին: Զնայած զբան, այդ արդիւնքն էլ, որ ամբողջ պետութիւնը ամենազօրեղ դռգուման մէջ էր դրել, երեւաց իբրեւ կատարեալ անյաջողութիւն: Մոնոփիւզիաները մնացին իրենց բաժան զբութեան մէջ: Ընդհակառակը իտալիան և Աֆրիկան գտնում էին՝ թէ այդ որոշումներով փնասւում է քաղկեդոնականութիւնը, որ բարձր էր գնահատւում ամբողջ արեւմուտքում: Վերին իտալիայի և իտալեան եպիսկոպոսները պառակտումը հասցրին հերձուածի, որ մի քանի սերունդ տեւեց: Եւ Աֆրիկայի Փեկունդոս Հերմիանցի եպիսկոպոսը համարձակ խօսքերով կայսեր երեսին էր զարկում, սուրբ զրբից օրինակներ բերելով (Ռոմիս, Դաթան, Արիոն և ին.), որ նա իւր իշխանութեան իրաւունքների սահմանից անցնում է: Միայն Բրիտոսն է որ միաժամանակ թագաւոր է և քահանայ. նա չի տուել թագաւորներին այն, ինչ որ քահանային է յատուկ: Սոքա այնպիսի ձայներ են, որ արդէն հնչել էր Դոնատոս Մեծը, և այդ հին ժամանակներից ի վեր կազմում է արեւմտեան եկեղեցու արդարացի առանձնայատկութիւնը: Օրինականութեան մէջ քարացած արեւելքը այդ բաները կը լսէր մեծ զարմացմամբ, գուցէ նաեւ արդար բարկութեամբ, սակայն յետագայ դարերում նոյն բաները արձագանք գտան նաեւ Բիւզանդիոնում:

Այդ բոլոր անյաջողութիւնները Յուստինիանին չշփոթեցին և նա շարունակեց մերձեցում գլուխ բերել: Դեռ իւր թագաւորութեան վերջի տարին, առանց յոգնելու, դաւանաբանութիւններ արտադրող քահանայ-կայսրը, մի հրովարտակ արձակեց, որ բարեպաշտ ականջների համար շատ վիրաւորական էր, որով տէրութեան դաւանանք էր հրատարակուելու «Աթթարտողկետիսմոսը» — Տիրոջ մարմնի անապականութեան ուսումը, որ նոյն իսկ մոնոփիւզիաներից շատերից մեր-

ժուած էր: Միայն կայսեր փաղահաս մահը 565 թ. ազատեց օրթոդոքս եկեղեցականներին հաւատոյ ամենամեծ հալածանքներից՝ պաշտօնազրկութիւնից և աքսորից:

Մինչդեռ մոնոփիւզիաների վրայ նայում էին ընդհանուր եկեղեցուց թէկուզ բաժանում, անդամների վրայ, և նոցա հետ վարւում էին ակներեւ մեղմութեամբ. ինչպէս սովոր է միշտ վարուելու բիւրոկրատիան, երբ նա գործ ունի լաւ կազմակերպւած և հաւատարիմ հետեւողներ ունեցող եկեղեցական համայնքների հետ, առանց այլևայլութեան էին վարւում միւս հետեւալ համայնքների հետ, որոնք թւով փոքր էին:

(Շարունակելի).

Մեսրոպ Վարդապետ.



ԽՈՐԵՆԱՅՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՆՈՐ ՓՈՐՁ

Ա.

Խորենացու գրութեան ժամանակի մասին հետազօտութիւնները և բանակոխը՝ թեր և դէմ կարծիքներով շարունակւում են: Սոկրատ Սքոլաստիկոսի և Սեղբնատրոսի Վարքի հրատարակութիւնը հ. Մեսրոպի աշխատութեամբ բանակուին և խուզարկութեանց նոր նիւթ և նոր դարկ տուեց: Փոքր-Սոկրատի վրայ գրուած յօդերը չարգարացան: Բոլորովին համակարծիք եմ հ. Մեսրոպին, որ Փոքր-Սոկրատն է Խորենացուց օգտուողը, ուստի և Խորենացին կանուխ է Փոքր-Սոկրատի խմբագրութիւնից: * Ուրեմն և Փոքր-Սոկրատով, որի մէջ հիւստւած է և Սեղբնատրոսի Վարքի համառօտութիւնը, անհնարն է որոշել Խորենացու գրութեան ակրմակիցը, այսինքն այն թուականը, որից առաջ չէր կարող գրուած լինել Հայոց Պատմութիւնը: Մեծ-Սոկրատի և Խորենացու կապը չհաստատուեց, դոնէ այդ բանն ապացուցանելու համար հարկաւոր են նոր և դրական փաստեր: Նոյնը կարելի է ասել, կամ լաւ ևս կարելի էր ասել Սեղբնատրոսի ընդարձակ Վարքի հայ թարգմանութեան համար: Այս մասին հ. Մեսրոպը իւր հետազօտութեամբ հասու հետեւեալ եղբակացութեանը. «Խորենացին չէ ճանաչել Սոկրատի եկե-

* Համառակն է աշխատում ապացուցանել պ. Դր. Խաչքեանցը, որի յօդուածի. դեռ միայն առաջին մասը այժմ հասու մեր մոտը. Տես Հանդ. Անսոր. 1897, հոկտեմբեր:

ղեցական Պատմութիւնը, և ոչ էլ որ և է կերպ
օգտուել է նրա յունարէն կամ հայերէն բնագրից,
բայց օգտուել է Սեղբեստրոսի Վարքից, րկեւ ոչ
մեր ձեռքի հասած հայերէն քարգմանութիւնից * (Սոկ-
յառաջ. եր. ԽԹ):

Ենթադրելով Խորենացու ձեռքում Սեղբ-
Վարքի յունարէն բնագիր՝ Հայոց Պատմութեան
գրութեան ժամանակը մնում էր առաջուայ նման
առկալի և վիճելի, տեղիք տալով երկու կողմի վի-
ճողներին քաջքշել պատմաօրը յետ ու առաջ՝
հնգերորդից մինչև իններորդ դարը:

Մի նոր չնկատուած փոխառութիւն, մի ամ-
բողջ հատուած, լուծում է մեր կարծիքով վերջ-
նականապէս այսչափ երկար յեղեղուած խնդիրը:
Այդ հատուածը Սեղբեստրոսի Վարքի հայ թարգ-
մանութեան սկզբնական, չհամառօտուած, բնա-
գրիցն է: որտեղից և արտագրել է Խորենացին
փոքրիկ սրբագրութիւններով: Ահա այդ հա-
տուածը.

Վարք Սեղբ-ի
եր. 699

Խորենացի (1331)
Գ. 67

Եւ (Սեղբեստրոս էր) բա-
բէվայելացեալ քան զբոլոր
վիճակաւորսն.

Եւ երանելին Մեսրոպ փո-
ղեցաւ յաշխարհէ ի վա-
ղարշապատ քաղաքի գե-
րազանցեալ քան զամիրայն,
որք զայնու ժամանակաւ էին
առաքինիք, Քանդի ամբար-
տաւանութիւն եւ մարդա-
հաճութիւն ի նորա վարս
տեղի գտանել երբեք ոչ
կարացին. այլ հեղ եւ լա-
ւակամ եւ բարեխորհուրդ-
գոյով. եւ երկնայնոցն զար-
դարեալ սովորութեամբք
ղինքն բոլորից ցուցանէր,
Վասն զի գոյր տեսեալ
հրեշտակական, բա-
նիւ տրամապայծառացեալ,
գործով սուրբ, մարմնով
արտափայլեալ, սարասիւք
անձաւ, խորհրդակցութեամբ
մեծ, հաւատով ուղիղ, յու-
նով համբերողական, սիրով
անկեղծաւոր, Այլ վասն զի
զբոլորոն նորա զուգըու-
թիւնսն ոչ եմ բաւական ա-
սել, առ ի մասնաւորականսն
գործեցեալս գարձուցից ըզ-
բանս:

Այստեղ այլ ևս որ և է կասկածի կամ ա-
ռարկութեան տեղիք չէ մնում: Չորովորեցի
Գրիգորի Աբասը կամ Աբասուն Գրիգորը** թարգ-

մանում է յունարէնից Սեղբեստրոսի Վարքը,
Տիրակացու ձեռքով կատարուած Սոկրատի թարգ-
մանութիւնից 18 տարի առաջ, 678 Փրկչական
Թուին, ինչպէս հաւատարմ էն վաւերական յի-
շատակարանները (տես յառաջաբան Սոկ. Սքո-
լաստիկոսի): Նոյն այդ քարգմանութիւնից մի ամ-
բողջ երես ընդօրինակուած է Խորենացու Պատ-
մութեան մէջ: Այս ընդօրինակութիւնը, ակնե-
րեւ է ուրեմն, որ ոչ մի զէպըում չէր կարող
678 թուից առաջ լինել: Այս կարական ապա-
ցոյցն ուրիշ տեսակ մեկնութիւն կամ բացա-
տրութիւն տալուն՝ խոստովանում ենք որ՝ մեր
խելքը չէ հասնում: * Եթէ փոխառութիւնը լի-
նէր փոքրիկ, կարճ ասացուածներով կամ՝ ըստ
էութեան աննշանակ՝ ոճերով, այն ժամանակ
ղեւ թերեւ հնարաւոր լինէր ենթադրել, որ Չո-
րովորեցի թարգմանը՝ լաւ ծանօթ լինելով Խորե-
նացու Պատմութեանը՝ գործ է ածել իւր թարգ-
մանութեան մէջ նրա մի բանի ասացուածները
կամ ոճերը, առանց իւր բնագիրը փոխառութեամբ
ընդմիջարկելու: Բայց այս հատուածը ընդմի-
ջարկութիւն չէ և կայ բառացի նոյնութեամբ նաեւ
յոյն բնագրում: Թէև Խորենացին ունի նաեւ աւելի
մանր՝ արդէն նկատուած՝ փոխառութիւններ
Սեղբ. Վարքից, որոնք մինչև այժմս շատերի հա-
մար եթէ զեւ բաւարար համոզել չէին, այսու-
հետեւ կարծում ենք որ ստանում են աւելի ոյժ: **
Ահա այդպիսի մի նոր փոքրիկ փոխառութիւն
էլ: ***

* Հարկ եմ համարում յայտնել, որ հ. Մեսրոպը,
ղեւ իմ վերհուսմ մէջ քերած փոխառութիւնը զանկող
շատ առաջ՝ հաղորդել եր ինձ, որ համբաւաւոր հայագետ
Նորայր Բիզանդացին նամակով ինձ մի քանի դիտողու-
թիւններ է գրել Սոկրատի, Սեղբեստրոսի Վարքի և Խորե-
նացու յարկութեան խնդրի առթիւ, ի պաշտպանութիւն
Խորենացու նախնութեան: Այժմ՝ իմ դիտած փոխառու-
կան հաստատները ցոյց տալով հ. Մեսրոպին՝ ճշդկապայ
նամից, որ նաեւ Ն. Բիզանդացին, ինձից անկախ և ինձից
շատ առաջ, յուլիսի 25-ին գրուած նամակում, մասնա-
նիշ է եղել ճիշդ միևնոյն հաստատներին, րկեւ հանկույ
թոյրովին տարբեր հետեւանք իւր այդ դիտողութիւններից, և
յուսարով իմօտյ պացուցանել «Արարտում», որ Սեղ-
բեստրոսի Վարքից քարգման է օգտուել Խո-
րենացուց: Այժմս մեր ձեռքի հասած «Հանց. Ամս.»
Հոկտեմբերի համարում Պ. Խաչատրեանցն էլ խոստանում է
«պացուցանել հայ պատմագրի կախովը նաեւ Մեծ Սոկ-
րատին կից Սեղբեստրոսի ընդարձակ վարքից»,
սակայն զեւ առանց մասնակի լինելու որ և է փոխառ-
նութիւն հաստատի:

* Մեմք եմք ընդգծում:

** Այսինքն՝ Գրիգորի որդի Աբասը կամ Աբասու
որդի Գրիգորը:

** Տես Սոկ. յառաջ. եր. ԵԳ:

*** Նկատուած և նորայրից իւր նամակում:

Վարդ Սեղբ-ի
Էր. 713

Խորենացի
Գ. 29

Յե՛ս քարեքայսացոյն ձեր Յե՛ս քարեքայսացոյն Վա-
պահեալմա՛ր Սարմա- ղե՛սի պահեալմա՛ր Գթայն
ցւոցն դարձի յաղթութեամբ դարձի

Ծայրայեղ պահպանողականները թերեւ ա-
ռաքեն, որ Չորոփորեցին կարող էր աչքի առաջ
ունենալ միանգամայն և՛ յոյն բնագիրը և՛ Խորե-
նացուն։ Եւ ենթադրենք առ ըստէ՛, թէ Խորե-
նացին յերաւել՝ վերեւում առաջ բերուած հա-
տուածք ուղղակի յոյն բնագրից է թարգմանել։
Իսկ Չորոփորեցին՝ ծանօթ լինելով Խորենացուն
և նրա այդ մի կտոր փոխառութեանը Սեղբե-
տրոսի յոյն բնագրից՝ հէնց այդ պարբերութիւնը
թարգմանելիս օգտուեց Խորենացու արդէն պատ-
րաստ ընտրագրութեամբ։ Այս թէ՛ և շատ քաշ-
քշուի, բայց ոչ բոլորովին անհնարին ենթադրու-
թիւնն էլ անհիմն է դուրս գալիս, երբ ուշք ենք
դարձնում այն մանր տարբերութիւններին, որ
կան երկու հեղինակների մէջ։ Չորոփորեցին ա-
սում է՝ «քառեվայելացեալ քան զքառու վիճակաւորս»,
իսկ Խորենացին՝ «գերազանցեալ քան զամենայն», որք
զայնու ժամանակաւ էին առաքելիք։ Չորոփորե-
ցին թարգմանում է՝ «առ ի նորա վարս տեղի գտա-
նել ոչ ուրեմ կարացին», Խորենացին կոկում է՝ «ի
նորա վարս տեղի գտանել երբեք ոչ կարացին»։ Չո-
րոփորեցին գրում է՝ «բարեակամ, բանիւ տըա-
մապայծառացեալ, գործով սուրբ, յուսով համ-
բերողական» ևւն, իսկ Խորենացին աւելի ողորկ՝
«լաւակամ, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ,
յուսով համբերող»։ Ինչո՞ւ համար Չորոփորեցին
պետի գրէր տրամապայծառացեալ և ոչ պայծառ, եթէ
Խորենացուն էր արտագրում և ոչ թէ յունա-
րէնից ստեղծէր և բառացի թարգմանում։ Ու-
րեմն և այս դէպքումն էլ կարող ենք պնդել ա-
ռանց տարակուսանաց, որ Խորենացին է բանա-
քաղը և ոչ Չորոփորեցին։

Այսպէս ուրեմն, մեր կարծիքով, լուծւում
է՝ և այն վերջնականապէս՝ Խորենացու Հայոց
Պատմութեան գրութեան ժամանակի, ուրեմն և
վաւերականութեան խնդիրը։ 678 րոյից առաջ Խո-
րենացու Հայոց Պատմութիւնը վար։

Գալ անգամ կաշխատինք, եթէ հնարաւոր
է, աւելի մօտենալ Հայոց Պատմութեան գրու-
թեան բուն ժամանակին *։

Գալուստ Տէր Մկրտչեան

22 Հոկտեմբերի
1897

Մեր երկու ԳԵՐԿԱՆ ԼԵՂՈՒՄ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԳԻՐԸ.

— 24 —

Միկենայի Հանդէս Ամսօրեայի այս տա-
րուայ սեպտեմբերի համարի մէջ Ծաղկաքաղ սո-
րազրութիւն կրող յօդուածգիրը, որը, ինչպէս
երևում է, խմբագրութեան և նոյն իսկ Վիկենայի
Միկենայի Խմբագրութեան բերանն է, մի քանի նկատու-
թիւն էր արած մեր երկու գրական միութեան մա-
սին. թող սուէք, խնդրեմ, Արարատի մէջ զետե-
ղել մեր մի քանի կարծիքն այդ խնդրի նկատմամբ,
որի մասին մինչև այժմ գծախառնար բազմակող-
մանի քննադատութիւն և ուսումնասիրութիւն ե-
ղած չէ։ Մենք յաւակնութիւն չունինք, անշուշտ,
այդպիսին ընծայելու ընթերցողին, բայց կարծու-
ենք, խնդիրը պարզելու համար աւելորդ չի լինի
յայտնել, ինչ որ այդ մասին մտածում ենք։

Մենք համաձայն չենք յարգելի Ծաղկաքաղի
միջոցով Հանդէս Ամսօրեայի յայտնած մի քանի
գաղափարներին, ամենից առաջ այն գաղափարին թէ
«առ այժմ մեզի արեւելեան և արևմտեան լեզուե-
րու միութիւնն անհրաժեշտ հարկաւոր չէ»։ Գուցէ
Հանդէսի ուրիշ համարների մէջ պատճառաբա-
նուած է այդ տարօրինակ կարծիքը, բայց Ծաղկա-
քաղն այստեղ ոչ մի պատճառ չէ բերում թէ ին-
չո՞ւ լեզուների միութիւնն առ այժմ անհրաժեշտ
կարեւոր չէ համարում, զի անշուշտ պատճառ կա-
րելի չէ համարել այն թէ առ այժմ «մեզի կարեւոր
է հայերէնի ուսումնասիրութիւն, հայերէն քննադա-
տական յօդուածներ, ընդհանուր զարգացում՝ գիտու-
թեան մէջ. և ասոնց քով երկրորդական խնդիր կը
մնայ լեզուին այս կամ այն ձևին դէմ ի դուր բո-
ղոքելը, բանակոխ մղելը» և այլն։

Արդարեւ, լեզուի այս կամ այն ձևի դէմ բո-
ղոքելը երկրորդական է վերոյիշեալների դիմաց,
բայց մենք երկու գրական լեզուների միութեան
ծանրակշիռ խնդիրն այդպիսի բողոք կամ բանակոխ
չենք համարում, եթէ գիտութիւն ձեռք բերելը,
ընդհանուր զարգացումը ևւն անհրաժեշտ են, մի-
թէ լեզուի միութիւնն այդ պատճառով պէտք չէ
կարեւոր համարել, Կարծում ենք, եթէ մէկը կա-
րեւոր է, միւսն ևս կարեւոր, իւրաքանչիւրն իր
չափով, Կարելի չէ ասել թէ մեզ գիտութիւն է

այլափոխուած է՝ այսպիսի. «Եւ գերազանցեալ եւ վայել-
չացեալ այլն ձանախիւր ի ժառանգաւորս եկեղեցոյն Հը-
ռովմայ, վերագոյն ըստ արդարութեան անհարմար յա-
ռաքանայր յամենայնի պիկո հուստով եւ վարոյն եւս
պիկացոյն, քառեխորհ, ողբախոհ, սուրբ, մեկնեալ յամե-
նայն իւրաց յարաց, ինք քարոյս եւ խմբաւոր արհիւ, եր-
կայնաւիս եւ մարդասեր, անհատ միջոցեցոյն, հեշտակա-
կան դիմի, հեշտակական եւս շարժման եւ քարքառով,
եւ յամենայնի գարեցոյն ունիւր զմեմանութիւն, որոց աշա-
կերեալն եր ի Քրիստոս Յիսուս» Փոքր-Սոկ. եր. 699։

* Այս յօդուածում մեզ հետաքրքրող փոխառուած
հաստատութիւն Փոքր Սոկրատոս անձանակի դառնալու լափ